



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 31

ՏՈՒՐԱԹ

30 ՅՈՒԼԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻՍՈՒՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղ.բ.	Տարեկան 54 Ղ.բ.	Տարեկան 12 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ .

ՄԵԾ ՎԱԺԱՅԱՑՈՒՄ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԻՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹԻ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հասց 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճասէսի քիւ 23



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ի

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւոր թուածը, հաստատունը և գիւրագործելին ըլլալուն բոլորովն աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍԿԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- | | |
|---------|--|
| ԲՆԲՍ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՆԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՐԻՏՍԻ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ Երաշխատութիւն

Մասնաձեւեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուլուի տունը:



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՌՈՒՆԴ

Bovinineը որ զուտ ստիւրներու ծովէն, ուղեղէն պատրաստուած զօրաւոր, կազ-
դորիչ, և մինչև հիմա գտնուած specialitéներու մէջ հազարաւոր Ամերիկացի բժիշկ-
ներու կողմէ առաջնակարգը և անզուգականը հռչակուած է:

Ամէն անոնք սրտի, կրծքի անախտոժութիւն, սկաւորութիւն, նիւարութիւն, դաշ-
կութիւն, անստիւնութիւն եւ այլն, պէտք է անմիջապէս սկսին գործածել Bovinineը,
որուն որդիւնքը թէ շուտ և թէ դժհասակէ պիտի գտնեն:

Bovinineի միակ ներկայացուցիչը՝ ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահչէ-Գաբու Նամակա-
տան կռնակը:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 31

ՇԱԲԱԹ

30 Յուլիս 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Արձակուրդի քի արձակում. (Խմբագրական). — Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ : Յիշատակներ (զարմանալի անգիտություններ). — ՅՈՎ. Գ. ՊՈԶՄԱՆԱՆ : Թափառումներ (Բռնիք). — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆՅԱՆ : Գրական ասուլիս . — ԵՐ. ՃԻՒՀԵՐԵԱՆ : Վարդերը (Ոսանաւոր). — ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԵՉԵՐԵԱՆ : Շոգեմաւին մէջ աղջիկս . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Տիկինը (իւր ննջատեղեկին մէջ). — ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ : Առ օդին . — ԵՐՄՈՎ ԳՈՒԹՈՒՄՃԵԱՆ : Կապիկներու աշխարհին մէջ (Հանրագիտական քերթոնք). — ԼՈՒԻ ԺԱԲՕԼԻՕ :

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԹԷ ԱՐՁԱԿՈՒՄ

Վերջացող Յունիսին հետ կրթական մեծակալ շրջան մը, երեք հարիւր վաճառուն օրերու երկա՛ր միջոց մըն ալ անցաւ դնաց ուսանող պատանեկութեան մատաղ կեանքէն : Վարժարանները անգամ մըն ալ տուին իրենց այգեկութի բերքը սարքուած հանդէսներով , որով շրջուցիչ կողմաւորութիւններու , շողջողուն ցոյցերու և ականջ խլացնող ծափերու մէջ հեղ մըն ալ եկան պարտկել բոլորած շրջանին իրական ու խաբուսիկ արդիւնքները :

Հիմա արձակուրդի շրջանին մէջն ենք : Այս շրջանը որչափ սիրուած , որչափ վնասուած ու որչափ հաճելի ուսանող պատանեկութեան համար , նոյնչափ ու թերեւս ա՛լ աւելի ձախող ու անապաստ ըլլալու սահմանուած է կարծես կրթական մշակին համար : Այնպէս որ երբ առաջինը ածնական մեծ օրի մը պէս չուտնով կը քաշէ անիկա , ասդին , ին՛դն ուսուցիչը շատ անգամ անէծքով ողջունելու կստիպուի , չի հասնելիք դալուստը , այդ շրջելի շրջանին :

Ինչո՞ւ ասիկա :

Արձակուրդը , vacance , լաւ ըմբռնուած , չէ սահմանուած անշուշտ մատաղ մանկութեան , ուսանող պատանեկութեան համար : որովհետեւ ասանք , իրենց

տարիքին յատուկ անհոգութեան մէջ պէտք մը չեն ցուցներ այդ պարապուրդի օրերուն, և դառնուկի համակերպութիւնով կերթան կուգան իրենց ցոյց տրուած վարժարանը, անխօս, անտրտուն, ու անդիտակ ու է վաստակի և յոգնութեան: Ընդհակառակը դպրոցէն դուրս, այդ vacanceի շրջանին մէջ է որ անոնք ինքզինքնին տուած պատանեկան խաղերու, հոս հոն ու ամէն տեղ, Օդեսսոսի այլոյ մը կողմէն տակ, փոշիի, բրախի քի ազատութիւններուն մէջ ոչ միայն իրենց քիչ շատ սովորածին ալ վրայ կուտան, այլև կը կորսնցնեն իրենց ֆիզիքականէն ալ շատ բան՝ նոր հագեր, նոր ցաւեր բերելով իրենց ծնողքներուն: Այս պարագային մէջ պարապուրդը անոնց համար սահմանափակ տեսնել, ամենէն տխուր մտածումը եղած պիտի ըլլար՝ չունենալով իր մէջ նպատակը արդարացնող ամենապղծիկ պատճառ մը:

Այսօր զաւկի տէր ամէն ծնոյք դժգոհ է այդ երկու ամիսներու երկար պարապուրդէն. չկայ մայր մը որ առաջին երաժշտիկ պէս չտուրէ իր ամուսինը հետը տանիլ տղան, որ անտանելի դարձած է ալ տունին մէջ. չկայ նաև հայր մը որ զղուած պղտիկին զինքը դարձին մէջ հանդարտ չձգելէն, բերանը չի բանայ ու չըսէ իր կնոջը՝ զաւկիդ տէր եղիր, ես գործս ձգելու և ճանապարհ ընելու չեմ: Ահա այս պարագային ալ ծնողքներն են որ անխմտ և անմեկնելի կը դառնն դպրոցին vacanceը:

Հիմա տեղն է հարցնելու թէ՛ որ՞ու համար կընենք զայն. ինձի հետ մէկ տեղ համամիտ պիտի ըլլան շատերը երբ ըսեմ թէ արձակուրդը միջոց մըն է, սահմանափակ կըթաղան վարիչներուն հանգիստին համար, որուն պէտք ունին անոնք, ամբողջ տարուան մը յոգնած ան շխառութիւններնուն, անտանելի ազնութիւններնուն, և քրտնաշունչ վառտակներնուն հետեւանքով, պէտք ունին անոնք, և ասիկա նոյն իսկ մեր պղտիկներուն օգտին համար, հոգւով, մտքով և որոտով կազդուրուելու և աւելի թարմացած ուժերով պատրաստուելու համար դպրոցական վերամուտին:

Եւ սակայն ցաւալի, շատ ցաւալի է ըսել որ կըթաղան այդ վաստակաբեկ մշակները, մեր այդ խեղճ վարժապետներն ալ, հազիւ անցուցած հանգէսներու գեղեցիկ տպաւորութիւնը, հազիւ մտած մարմնական ու մտաւորական կազդուրումի այդ շրջանը, յանկարծ կ'ենթարկուին տեսուի մը ախոր ու անճոռնի անակնկալներու, որոնք զրեթէ միշտ բղիւսած անոր ասոր քմահաճոյքէն, կուգան ալ աւելի խռովել անոնց հալած մաշած սիրտերը, անոնց յոգնած պարատառած հոգիները:

Ի՞նչ կը նշանակէ աս. ի՞նչ ըսել է տարին անգամ մը, և այն ալ ամենէն աւելի հանգիստի պէտք ունեցած միջոցին զրկել խեղճ վարժապետը իր պաշտօնէն՝ իր ու իր ընտանիքին հացէն ընելով անիկա, ինչո՞ւ և ի՞նչ բանի համար արձակուրդի փոխել անոր արձակուրդի իրաւունքը:

Մենք տակաւին շատ հեռու ենք պարապուրդը ըմբռնելու, այնպէս, ինչպէս որ է: Հետեւաբար մեր խեղճ ուսուցիչները պիտի կրին տակաւին քմահաճոյքներու այն գէշ հետեւանքները՝ մինչև որ լուրջ միջոցներ ձեռք չառնուին այս գէշ ունակութիւնը կասեցնող:

Ամենէն ցաւալին այն է որ կարգ մը մարդիկ, Թադական կամ Հոգաբարձու, է՛ն փափուկ պարագաներու մէջ անգամ չեն մտածեր հետեւանքը և կը գործեն անանկ անխղճութիւններ, որոնք չեն կրնար ներուիլ՝ որչափ ալ մեղմացուցիչ պատճառներ մէջ բերուին:

Թարմ և սառց գրինակ մը այս տեսակէն:

Պոլսոյ կողմը, երկաթուղիի ճամբուն վրայ դանուած թաղի մը վարժարանին ուսուցիչներէն մին, բաղդին մէկ անիրաւ կատակին նշաւակ, դժբաղդութիւնը կունենայ առժամապէս հեռու մնալ՝ ոչ միայն տղաքերի ցաւերէն հաղիւ տղատած իր կնոջմէն՝ այլ և իր առջինէկ սիրասուն զաւկէն, զոր հաղիւ գրկած, սիրած և հայրական խանդակաթ առաջին համբոյրը դրած էր անոր կայս ճակարին վրայ: Դժբաղդ կինը, երբ գիշերը ցորեկին խառնած կուլայ ցաւալի պատահարը, կողրայ իր հոգեհատորին առաջին դժբաղդութիւնը և աղի լեղի արցունքներով կը լուայ անոր անբլծ դէմքը, առդին խեղճ վարժապետին պաշտօնավարած վարժարանի Թադ. խորհուրդը՝ դիտնալով հանդերձ այս դժբաղդ պարագան, չի խղճար ժամկտ աղբարի մը միջոցաւ նամակ մը ղրկել անոք ու անպաշտպան մնացած վշտակիւ մօր մը տունը, իր ամուսնոյն վարժարանէն ԱՐՁԱԿՈՒՄԸ ըլլալը յայտնող:

Խղճի ու զգացումի աէր աղնիւ ընթերցողներուս թողլով մտածել մնացածը, կը վերջացնեմ յօդուածս, սա երկու բառը միայն ուղղելով ամէն անոնց հասցէին որոնք ուսուցչին հայրին հետ կը խաղան:

ՄԵՂԻ, ԱՄՕԹ

ՅՈՎԷ. Յ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի կէտիկ-փաշայի Ս. Յովհաննէս եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ յուշարկաւորութիւնը

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍԻՄՈՆ ԱՂԱՅԻ

որ իր մահկանացուն կնքեց Երկուշաբթի առաւօտ: Կը նախադաճէին Տ. Դէորդ և Տ. Յովհաննէս Եպիսկոպոսները, չընտաւառուած վեց վարդապետներէ և բաղմաթիւ քահանաներէ: Խուռն և ընտրեալ բաղմութիւն մը լեցուցած էր եկեղեցին, կազմուած Պոլսոյ սեղանաւորական և վաճառականական դասին ծանօթ անձնաւորութիւններէն, որոնք փութացած էին իրենց վերջին յարգանքը ընծայել հանգուցեալին: Արարողութիւններէն հաջորդ հանդիսաւոր թափորով առաջնորդութեամբ եկեղեցիին դուռը, տրիէ առաջնակարգ մեռելակառքով մը փոխադրուեցաւ Պալլզը, և մարմինը ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

Խմբագրութիւնս այս առթիւ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին զաւակներուն՝ Գարեգին, Յարութիւն և Գրիգոր Սիմոնեան էֆէնտիներու, ինչպէս նաև բոլոր պարագաներուն:

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ԳԱՐՆԱՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՍ

Վայրեր կան, զոր շատ քիչ անգամ բաղդաւորութիւնը կ'ունենայ մարդ վայելելու, և որուն թողուցած ապաւորութիւնը զօրեղապէս կ'արթնցնէ ու կը թրթռայնէ հոգեւոյն մէջ կեանքի անուշ զրուագիւնքէն մին, որ սովորականէն շատ աւելի որոշ ու պայծառ գոյներով պատկերացած կը պարզուի այն մեր աչքերուն առջև, անցեալին մութ տարտամութիւններուն մէջէն: Այդ տեղերէն է Կ. . . զիւղը, որուն խնկելի յիշատակը տակաւին կենդանի՝ վերջնականով կ'արթննայ մտքիս մէջ:

Քաղաքէն չորս ժամ հեռաւորութեամբ հիանալի բլուրի մը վրայ կը բարձրանայ այդ պատուական ու պատմական գիւղը, օժտուած առողջարար օդով, պաղուկ ու դուլալ ջրով, հովասուն ծառերով և պէտքած բազմաբանգ ծաղիկներով և դունադեղ դաւարիքով:

Արդարեւ բնութիւնը իր վայրի ճաշակներով այնպիսի գեղեցկութիւններ յօրինած է որ արուեստական ամենակատարեալ գործեր երբէք չպիտի կրնային անոր հետ մրցիլ, և մեր գիւղը բովանդակ բնութիւնը գինով-ցընող մոգականութեամբ օժտուած է, ուր մարդ երբ անգամ մը ինչայ, չուղեր բաժնուիլ անկէ անոր սարքած զմայելի հմայքներէն դրաւուած ու գինովցած:

Այդ գեղատեսիլ բլուրին արգաւանդ կուրծքին վրայ արփւոյն առաջին ցոլքերը կ'իջնեն սիւսելով աջ ու ձախ լոյս ու կեանք, հիւթ ու փայլ:

Երգիչներուն վարպետն ալ — սոխալը — վարդի թուփերու վրայ թառած, կուգայ ցոլացնել և փառաբանել Արարիչին փառքը, ինքն ալ Անոր սիրով յափշտակուած ու գեղովը գինովցած:

Գիւղը պէտքած է նաեւ մեղամաղձոտ գեղեցկութեամբ լի եղեւիններու սարգարթախիտ անտառակներով, ուր կը լսուին թռչնակին երգն աղու և հոտաղին սրինգին բնագեղները մեղանուշ, որոնք իրօք շատ հոգ կ'ազդեն գգայուն հոգիներու վրայ:

Գիւղին չըջակայ դաւարադեղ մարգերուն վրայ տարածուած են սիրուն դառնուկներու հօտեր, որոնք ինչ յուզիչ և մարմնող մայիւններ կ'արձակեն, որքան կը թռչեն, կը գերեն մեզ իրենց անմեղ ցատկերտուքներով: Անդին դաշտի ժրարողուկ դաւալը, ձմրան թոյլ ու մեղկ կեանքը թօթափած իր ուռէն, հաւախօսէն մինչև վերջալոյս փարած հողին, բուն ըզմանքով մը արփւոյն հրաւորա ցոլքերուն տակ քրտինք կը թափէ և կ'աշխատի դաշտը արգասաւորելու:

Այս ամէնը բնութեան երաժշտութիւնը ու երգերն են որ անգագար կը մատուցուին է ինչ ազօթ քներու նուիրականն ու սուրբ, պայծառն ու մաքուրը. երանի՜ թէ մարդոց ազօթ քներն ալ այսպէս ջինջ ու մաքուր ըլլային:

Ո՛հ, որչափ երջանիկ կըզգայ մարդ ինքզինքը բնութեան գոգին մէջ, կանաչութեան զմրւեալ ծաղքերուն մէջ, կարկաչահոս առուակին եղերքը, ծառերու գգուող ստուերին՝ աակ, անուշահոտ ծաղկանց բուրումներէն հոգիացած, կ'ուզէ երգել միայն, զգալ միայն, խորհիլ ու հատնիլ. . .

Միթէ կեանքի ու սեսարաններու այդ գանաղանութիւնը չէ՞ որ հաճելի և հրապուրելի կ'ընծայէ ապրիլը:

Դաւարադեղ եղեւիններով պսակուած բլուրին գագաթը կը բարձրանայ գեղեցիկ ու սիրուն մատուռ մը, որ այդ կոյս բարձրութեան վրայ կը սփռէ երկիւղածութիւն և պատկառանք:

Հաւատացեալի մը կրօնական յափշտակութեամբ լեցուած կըքանջանամ ու կըզմայիմ ի տես այդ պարզուկ և նուիրական տաճարին, որ բարեոյն, ճշմարտին ու գեղեցկին իտէսը կը ներշնչէ ինձի: Բովանդակ էութիւնս կը սարսուռայ, կը յուզուի երբ ինքզինքս բնութեան և Արարչին հետ դէմ առ դէմ կըզգամ: Հոգիս կարծես թընչ մը կ'անէ կրօնական ներշնչումի, կը վերանայ աստուածային խոկումներու և խոհանքներու մէջ, սիրտս թրթռուն բարախումներ, խոր խռովքներ և յոյզեր կ'ունենայ և միաքս կը լարուի վեհ ու վսեմ և հոգեւոր ներշնչումներով, որոնք զիս կը փոխադրեն սուելի լայն հորիզոններու, անծանօթ լուսաշխարհաց մէջ, դէպ ի բնութեան Հեղինակը:

Տրապիզոն

ՅՈՎ. Գ. ՊՈՉՄԱՆՅԱՆ

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

ԲՈՒՆՔԻՐՈ

Ան որ քալիմեոս, քալիսեոս մը ըսելու չափ յունարէն չը գիտեր, չիտակը ըսելով զանմէթ կընէ, մէկ ժամ մէկ քառորդ ճամբորդելով կղզի երթալով:

Մարմարալի չորս ծովաչիպաններուն էն հայւլայֆը և էն մեծը եղող Բոխմքիբօն այս օր քար կը հանէ՝ Բերային և Պէօյիւքտէրէին, այնքան մաքուր, այնքան միմօտիս ամառանոց մը դարցած է պէտք է ըսել:

Բոխմքիբօ գիմողները ընդհանրապէս երեք կարգի կընանք բաժնել:

1. Հոն տուն մը շինելով ամէն ամառ օգտօնութեան գացողները:
2. Կիրակիէ կիրակի օրէ այցելողները:
3. Բուն եկողները:

Արդ, ես որ իմ սահմանափակ դիրքիս մէջ, երկրորդ դասակարգէն ոչ անդին ոչ ասդին կընամ անցնիլ, ուստի անցեալ կիրակի պատուուեցայ այդ բարձր կղզիէն, ու օրս կղզիացեալ անցուցի:

Ոչ պաօխ և ոչ ալ անտուկիս մէջ նոր բան մնաց, բոլորն ալ կռնակս անցուցի, քաջ գիտնալով որ պզտիկ պարտաւանդութիւն մը պիտի կրնար զիս մղել մինչև անգամ «էնա բէտի» ներս կարգը: Վերջին անգամ երբ հայելին հայեցայ, բաց ի ինը գրպաններէս, բոլոր տեքօս համողեցին զիս որ կընամ կղզիանալ (°):

Ժամը երեքն էր երբ հասայ Բոխմքիբօ: Ահագին արեւը կարծես մի միայն այդ կղզիին համար ցաղեր էր այդ օրը, այնպէս որ հակառակ չոգենալին մէջ վայելած հովիտ, օձիկս բաջալուս դարձած էր և զըդակիս եզերքէն թորեալ ջուրի կաթիլները՝ աղի արցունքներու պէս այտերս ի վար կը գալարուէին:

Եւ որովհետեւ հոգ, այդ հայ-լայն վայրը մէկը ճանչնալու բաղդը չունէի, (հոս տեղն է ըսել որ, չարաչար զըջողած եմ այսօր, Մեծ-կղզիէն աղջիկ մը չառնելու իբր կին, որպէս զի փոխանակ թախառական հրեայի պէս տըմ տըզլալ մնալու, երկյարկ տուն մը ունենայի ապաստանելու), ուստի պօչս

սրունդներուս տակ առած յանցաւորի մը տարտամ քայլերով ինքզինքս հաղիւ débarcadere նետեցի:

Հաւատացէք աշխուհի քոյրեր, ամառուան հագուստ կարել տալու և ձեռք ուղեղու համար մօտէններու տուած դրամնիդ կ'երդնում որ մեղքայ: Լիւքս, խըզ, ֆըշէթուալէթներ, խենթինալիք բան, որ մէկը ըսեմ կամ զորն խոստովանիմ:

Օրիորդները, իրենց թուալէթներով օրիորդութենէ ելած կին եղած, իսկ կիները՝ կնիկութենէ դուրս օրիորդներու պէս, ինչ թուալէթներ, ինչ քօսքիւս տը կալաներ:

Հապա միւսիւները. մեքենայէն նոր դուրս պոռթկացածի պէս չիք տիւմ տիւիկ, և նոր: Պիտերնին հատիկ հատիկ սլորած դէպ ի երկինք, ոտքերնին ջուլալտըզի պէս սրածայր, (հոս ըսեմ թէ, կերդնում որ կղզի հասողները նասըր ինչ է չեն գիտեր, կոչիկնին վկայ . . .), վերջապէս անանկ վիճակի մը մէջ ուր կը գտնուի Գատը գիւղցի միւսիւն իր անուան տօնախմբութեան սարքուած սոսառիկ:

Հաղիւ նստած էի մաքուր և անփոշի աթոռի մը վրայ, ապուշ ապուշ (դուք կարդացէք անուշ անուշ) գիտելու ներկայ բաճօսաման, յանկարծ կառսօնը մօտենալով,

— Թի աղաբաթէ քիւիէ . . .

Տեսա՞ք, ձեզի չըսի որ յունարէն չը գիտողը խղճալի կըլլայ հոգ. սկսայ չորս գիտնալի, որպէս զի տակօցաւակ քօմանտ մը չընեմ. չատեր կալէօզ, որմէկը սուրճ, և ոմանք ալ հանգստապառառ ունէին առջևս ինչ: Ես սլոտիկ չի մնալու համար, լաւ է ըսել ինքզինքս ցուցնելու համար:

— Լնա ապսէնթ . . . ըսի:

— Ապսէնթ բւարթէ՞ . . . խօսք առաւ կառսօնը:

Այդ տեղը խալթ ըրիր . . . բայց առանց դէմքի գիծերս փոխելու «մալիսքա» ըսի ու սղան մեկնեցաւ, ապսէնթ Ֆուաբթէ, պաղ ըսել էր, և զէվէկութեան գէոսէն 50 աստիճան վար ըլլալու էր այդ հէրիֆը. ինչ և է, մինչ այս մինչ այն ըմպելիս եկաւ, ու Էնսիլիւնի մը վայել ծեքծեքումով կուլ տուի պուտիկ պուտիկ, ինչպէս սովոր է ըսել:

Ներկայ կուշտ ու կուռ բաղմութիւնը

փորս չէր կշտացներ սակայն, խմած ապ-
սեմքս սալօններ բացաւ ստամոքսիս մէջ :

Եւ որովհետեւ Բռինքիբօի պէս կղզիին մը
մէջ էր որ անօթութիւն կը դգայի, ուստի
պէտք էր ձաքօմօի պէս բարձր ճաշարան մը
բազմէի բազմութեան մէջ աչքի զարնուելու
համար : Բայց . . . աւաղ որ քօթիւմիս
ինը դրողանները անանկ մը ՈՉ պողացին որ
վախէս ինքզինքս պագայ Եօսկիին խանու-
թը գտայ, սառտեկա սալաթասիին պնակին
առջեւ :

Մինչեւ ժամը ցերեկուան վեցը խիստ
հետաքրքրական անցաւ զէթ ինծի համար .
իսկ այդ երանելի ժամէն վերջ, յանկարծ
առաւօտեան բազմութիւնը մօրիկէ մը քըշ-
ուածի պէս անհետացաւ, ու ես միակը ե-
ղայ փողոցները չափափող արեւի սատկցնող
ճառագայթ-անձրեւին տակ :

Բռինքիբօի հայ-լայն ընտանիքները սո-
վոր են ցերեկները քնանալ, երեկոյին դար-
մութիւն պատրաստելու և կամ ուռեցուորե-
լու համար :

Ինձ այնպէս կերեւէր թէ աշխարհքէն
վտարուած և ժողովուրդէն լքուած ժան-
վալժան մ'էի այդ աղնուամեծ կղզիին մէջ,
Սկիւտարի Չիֆթլիկը մտնալուս ամէն մարդ
ինձմով զբաղեցաւ, բայց հոս հակառակ մի-
նակս փողոցները դառնալուս չունենին ան-
գամ ցուրկին իմ կողմն չէին դարձներ,
հով հով մը ընելու համար :

Ինչ և է, ցերեկուան տաքը զիս այն-
չափ նեղեց, որ ուխտեցի անգամ մ'ալ ոտք
չի դնել այդ կղզին, մինչեւ անգամ երկա-
թուղիի պարտատոմսին առաջին պարգեւը
երբ չանէի :

Վերջապէս à la bonheur ! արեւը սխաւ
դուխը ծռել արեւմուտք բարձին տակաւ
աւ տակաւ, մինչ ես թափառական կը պը-
տըտիէի ծովեզերքը : Ու հակառակ քաջ
գիտնալուս թէ՛ Մեծ կղզի դացողը անպատ-
ճառ tour de l'île պէտք է որ ընէ, կառա-
պաններուն քով կը սլքտկայի, Սկիւտար-
ցիներուն պէս, որպէս զի մէկ երկու հոգի
ընկերովի բխօով կատարէինք այդ պոռոյտը
Չի յաջողեցայ ինչ մեղքս պահեմ, միւշտերի
չիկար :

Հիմա ժամը տասն է, բոլոր կղզիցիք
իրենց աչքառու բազի թուալէթներով կը

թափին Տեպառքատեօնը, ուր միւղիքը սկը-
սած է արդէն :

Ամէն անոնք որոնք կը դժկամակին կամ
կը հակառակին տեքօյքին համար, թող բը-
նաւ Բռինքիբօ չը գտնուին, մեղքը կը մըտ-
նան : Հաւատացէք աչքովս տեսայ անանկ
բաց թուալէթներ, կիսամերկ քօթիւմներ,
զորս տանը մէջ անգամ կը խափին հաղնիւու
Սալաթիացիները :

Խուսի խուսի ընտանիքներ, որոնց մէջ
գթան մազերով ջատուկներն անգամ շիբ
հով մը ունին վրանին, նստած են հիմա,
զբօսարանին մէջ մաքուր սեղաններու շուրջ,
իրենցմէ չատերը Գաղիերէն, Անգղիերէն,
Գերմաներէն և Յունարէն կը խօսէին, իսկ
ես իբր Հայր-Արքանամի հարազատ զաւակ,
ընտրեցի այն սեղանը, որուն շուրջ ոսկեղա-
րու դրաքառը կը սաւառնէր թեւատարած ! :

— Որչափ հիասքանչ մօռսօ մընէ՛ զար-
կածին, երանի թէ Ոթը ունենայինք, կը-
սէր օրիորդ մը, որուն գլխարկին վրայ զե-
տեղուած Փլէշը ԵՂՍԷ ԵՂՍԷ կուգար :

— Զգլխի օրիորդ, դիւթական, եթէ
կուղէք կրնամ անունը հարցնել . . .

— Ս. . . ձանձրութիւն կըլլայ . . .
սիրելի . . .

— Ձեզի համար . . . ը . . . կաղա-
չեմ . . . օրիորդ . . .

— Ձէի ուզեր զձեզ նեղութեան հրաւի-
րել այդ կերպով . . .

— Ծնոր՝ . . . ինքրեմ օրիորդ . . .

Հա . . . հասկցայ, իմ գործս չէր ալ
աւելի կենալ հող, ուստի կամաց մը սողոս-
կելով ականջներս ուրիշ տեղ վտխադրեցի
չաղտոսելու համար :

Դադափար մը եթէ կրցայ կաղմել Բռին-
քիբօի վրայ, այն է թէ, հոս ամառանոց ե-
կողները ամէնքն ալ ձեռքը բերին համոզ
դասակարգէն են, 2. Տիկիները ամուսին-
ներնուն մօտ վարժուելի դերը կը կատարեն,
3. Օրիորդները միւսիւէ մը աւելի համարձակ
են, 4. Սպասուհիները տիկիներէն զատե-
լու համար 11 թիւ միջօր ահնոց դնելու է
անողատճառ, 5. Օրիորդներու պուզը և
տանուտէրերու քսակը ոսկիով լեցուն են :

Խրատական . — Կ'ուղէ՞ք Բռինքիբօն
վայելել . նոյն այդ կղզիին մէջ տուէ տեղ
ուռեցող ծերուկ մէկու մը աղջիկը նայեցէք
որ առնէք իբր կին, այն ատեն կղզին վա-
յելելը հաճոյք մը կըլլայ, որ չունենար գին :

Վ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

Ամեն գործ իր մասնագէտը կուգէ : Ձախաւեր վիպասան մը փոխանակ կեանքի բարոյալից պատկերներով զգացումներ բարեւորչելու , կեանքի աղտոտ արահետներուն մէջ կը մոլորի ու կը մոլորեցնէ նաեւ իր ընթերցողները , որով արուեստը կը գահավիժի իր բարձրութենէն :

* * * Մամուլին պատշոնքը քեւ բազմակողմանի է , սակայն անոնց երկու զխաւունքն են , նախ առաջնորդ ըլլալ անգրագէտներու գաղափարներուն , իսկ արձագանգը՝ զարգացածներու կարծիքին :

* * * Շատեր կը գանգատնեն նոր գրողներուն յաւակնոտ եւ փառն գաղափարներէն . սակայն կը մտածեն երբեք առ այդ իրենց խաղաղած դերին վրայ : Օրում գրականութեան առաջնորդներն են անոնք ու հետեւողներ օրում գրագէտներու մեղադրութեան :

* * * Աւստրոսոց վարձատրելու է : Լաւ վարձատրուած աւստրալու մը հոգեւին կը փարի իր գործին , բան մը , որ անհրաժեշտ պայման մըն է յառաջդիմութեան : Աւստրոսին մը չվարձատրել յետադիմութիւն կը նշանակէ : Առանց զոհողութեան չկայ արդիւն : Դրականութեան համար ալ այսպէս է :

* * * Այսօրուան օրս շատ գրողներ ունին , ըլլայ մայրաքաղաքին մէջ , ըլլայ գաւառները . ասոնցմէ անոնք , որոնք գրած ըլլալու հանոյք վայելելու համար կը գրեն , չեն կրնար ապագային գրագէտ ըլլալ : Պէտք է գրել ոչ քէ գրած ըլլալու , այլ գրողներ դառնալու համար :

* * * Միշտ համակիր եղեք նոր գրողներու : Նորը հինին վրայ բան մը կ'աւելցնէ : Հինը միայն պատշէտ ու անոր վրայ մնալ յետադիմութիւն կը նշանակէ , իսկ նորին հետեւն երբայր իմացական յառաջդիմութիւն :

ԵՐ. Մ. ՃԻԻՀԵՐԵԱՆ



ՎԱՐԴԵՐԸ

Դարձան վարդերը ալ չ'եմ ուզեր ես ,
Անոնք չ'են բուրբեր ալ ինձի համար .
Հիմա անհրապոյր ծաղիկ մ'են զոգցես ,
Ձորքս սիրէի երբեմն խօլաբար :

Դարձան վարդերը ներմակ ու կարմիր
Որոնք կը բացուին ցողովը այցուն ,
Ձեփիւռին փափուկ հեւիքն՝ բերկրալիւ
Կը պատասխանեն կոյսի մը հանգոյն :

Դարձան վարդերը ունին սուր փուշեր ,
Չ'եմ ուզեր քաղել զանոնք մասներով ,
Թող ապրին իրենց կեանքը եսասէր ,
Սոխակէն խլեն հմայք ու զորով :

Դարձան վարդերը ալ զիս չեն դիրքեր ,
Անոնք պարծանքն են անգուրբ բնութեան .
Փըքքին մայիսին կողոպտելու սէր ,
Ծաղկասերներէն որոնք զայն կ'ըղձան :

Դարձան վարդերը լոկ չեսք մը ունին ,
Չ'եմ բաղձար պըննել հեզ լանջքս անոնցմով
Զի բորեմած է վնասով անհունին
Վարդը նորածիլ սրտիս անհունով :

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷԶԵՐԵԱՆ

ՍՍՆԹԻՄ ՄԻ ՏՄՔ

ԱՌԱՆՅ ԱՆԴԱՄ ՄԸ ԱՅՅԵԼՆԵՐՈՒ

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՄ ՇՈՒԿՍՅ, Դ. ԼՅՈՒՄԵՐԼԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի ,
ներմակեղեքի , Ֆանթեզիի , աղամանդի , ժա-
մացոյնի , շորալիւնի . և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԴԻՏԵՔ ԻՆՉ ՊՈՅՄԱՆԱՐ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքնուդ 20% կանխիկ ,
մնացեալը չարաթական 5% դրշ վճարելով
կանխիկ գնողին 5% զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծա-
նուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն
թէ՝ մօտ առնէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդելու :

ՇՈՐԵՆԱԻՆ ՄԷՋ ԱՂԶԻԿՏԵՍ

Մի զարմանաք հրա լսէք թէ աքլորը հաւկիթ է ածեր, ջորին ծներ է, և կամ նմանօրինակ արտաւոյ լուրեր, քանի որ չողենաւին մէջ աղջիկտեսի նորեկուկ սիւթէմը հնարեցին մեր իշկիւզար տուտուները:

Այս արտաւոյ լուրը երբ օրագրի մը սիւնակներուն մէջ կարգայիք, իբր Ամերիկեան նորոյթ, կարելի է այնքան չպիտի հետաքրքրուէիք, որչափ հոս ձեր քիթին տակը, Շիրքէթի ՅՅ թիւին մէջ կատարուած իրողութիւնը որ զձեզ արմանքէ զարմանք պիտի տանի:

Ամուսնութիւնը մեր մէջ այնքան դժուար խնդիր մը դարձած է որ, այսօր աղջիկ զաւկի տէր մայրեր ինքզինքնին տուած են գիտեր յղանալու, նորոյթներ, սիւթէմներ որոճալու, որպէս զի կարենան կանախնուն նետել այն ծանրածանր բեռը, զոր կը կրեն քանկուտուններու պէս. (քանկուտուն տեսակ մը չորքոտանի է, որ իր ձագուկներն մերթ փոքին մէջ և մերթ կանակը առնելով կը պտտցնէ):

Հարուստներու համար չէ մեր խօսքը, անոնք իրենց հաւնած երիպասարդը որսալու համար ոսկի կը հոտուրտացնեն նախ, ինչպէս օձ որսացողները կաթ կեռացնեն, որուն հոտէն կը սողոսկի գազանը: Հաղա ի՞նչ ընեն այն կարգ մը միջակ դասակարգի ընտանիքները, որոնք զուրկ են դրամի առաւելութենէն, ու մի միայն ստիպուած են ճարպիկութիւն և հնարք բանեցնել իրենց խուշիկին խաճեա մը ճարելու համար: Խաչ որ ճիշէրս կտոր կտոր կըլլայ . . . բայց ինչ օգուտ, ձեռքէս ի՞նչ կուգայ . . . :

Այսօր ձեզի պիտի պատմեմ թէ՛ ի՞նչպէս մայր մը իր աղջիկը չողենաւին մէջ աղջիկտես կը հանէ այնպիսի վարպետ դարձուած քով մը, որ ա՛մէն կնոյ զործը չէ պէտք է ըսել:

* * *

Տիկին Ագապի, այնքան սիրտ փոր հատուցած էր իր մէկ հատիկ Ֆուլիկը կարգելու համար, որ հալած մաշած բանկալի մոմ էր դարձած այլ ևս:

Ֆուլիկ, եթէ ոչ աղուոր ըսուելու չափ գեղեցիկ, այլ շիրիմ քիչմիւրի մըն էր պէտք է ըսել, ընող ըլլող, հագուածին պէս կուկիկ, սոթթուածին պէս ընող ըլլող, և բերանը բանալուն տիյնետիճի գաւակ մըն էր, և բոլոր զինք ճանչցողներուն սիրելին: Ագապին աղջիկը Ֆուլիկը կըսէին ան աս, և բոլոր գովասան բերանները կանգուններով կը լարուէին նպաստաւոր խօսքեր տեղալու անոր հասցէին, մինչդեռ իր մնալը ան ամուսին, կեանքն ըրած էր անհամ ու սին:

Բարի երազը կիրակի լուսնալու շաբաթ գիշերին կը տեսնուի կըսեն: Եւ իրօք շաբաթ իրիկուն մը դացող եկող համար հաղար ջատուկներէն հատ մը թիֆօի քրտինքներուն մէջ թաթխուած, տիկին Ագապիի եկաւ աւետել թէ, չի փախցնելիք տղայ մը կար ձեռքին տակը, սակայն պաշտօնական աղջիկտեսի արարողութիւնը չուզելով կատարել, եթէ կարելի է դուրսը տեղ մը սանկ հոլի պէս տեսնար Ֆուլիկը:

Եւ որովհետեւ նոյն այդ տղան կիրակի առաւօտ վերին Վոսիոր պիտի երթար, զոր ըսած էր ջատուկին, Ագապի սոթթաւորած, որոշեց նոյն չողենաւը գտնուել իրենին հետ, ու հոն դործը կիւղ թափել կարգադրել:

Որոշումը տրուեցաւ, ժամը որոշուեցաւ, ու խնդիրը մնաց աղջկանը հօրը՝ Միրիճան աղային ալ հասկցնել:

Ջատուկը մեկնեցաւ պէտք եղած պատասխանը առնելով, ու երեկոյն երբ աղան տուն հասաւ, հաղիւ թէ ձեռքի տողարակները գետինը դրած թէ չէ,

— Աչկդ լուս Միրիճան աղա, Ֆուլիկիս խամէթը ոտքը եկաւ . . .

— Ի՞նչ է ան կէսէ, դրացինին թալուխը՝ խըխ պողումի պերիք . . . հէ . . .

— Նասըլ թալուխ, պիրիճիկ տէլիսանը մը կտեր է. կիւլիսանէ չուտուն, վաղն առտու սահաթը երկուքին վաբօսին մէջը աղջիկտես պիտի հանենք . . .

— Էյ աղէկ ես, խաբտան է եղեր արդան, չէնէ մի տրամէնճի . . .

— Քա չէ . . . նաորը խաբտան, ափիօնի պօշ ճուլալները տէնկ տէնկ դուրս կը խաւրէ եղէր տէ, չուղեր եղեր քի քօքօք քօքօք աղջիկտեսի գայ, անոր համար վաբօւը թէրթիւլ ըրինք . . .

— Աստուած շնորհք տա քա, տահա պանկայ նէ ըրէք, ո՛վ իճատ ըրաւ, ատ հօլը ո՛վ ցուցուց . . .

— Ես, ես, իմին մայիսօշ էրիկս . . . նայէ խեղացի եմ կըսեմ նէ սուտ եմ . . . ծովը թնամէթ է կըսեն, իշալլահ կը հաւնի տէ Թուլիկս ըռահաթ տեղ մը կ'իյնայ . . .

— Հէլէ տուր պաղալըմ, սօլուխ առնեմ, ըսելով, ըստ սովորականին կը հանուի ու գիշերնոցը կռնակը անցնելով անկիւնը բազմոցին վրայ կանցնի կը նստի . . .

— Քա աղջիկ գիտես մալը քանիի կըլլայ ատ աղջիկտես ըսածիդ, հոս գային նէ անուշ խախլէով մը կը ճամբուէր, հիմա վարօւին մասրաֆները, անկէ մինչօք Սառը եար երթալ, հոս մասրաֆ, ետ դառնալուն նորէն մասրաֆ . . .

— Ինծի նայէ օյուհա չըգան օյնայսճագ, կէնէ սե պուլութները մի քաշէր թէփէս, իմ ներսիդէս կուգայ կոր քի Թուլիկս աս անգամ պիտի երթայ . . .

— Իմ ալ ներսիդէս ան կուգայ կոր քի Միրիճանին կուս կուլոր ոսկին պիտի երթայ . . .

— Ես ալ պէճէրուիմ տէ դուն ալ սէյրիճի եղիր . . . նայէ Ագապիին ֆէնտը ինտոր կլոս կեղլայ նէ աչկովդ տեսիր, ըսելով վերջ կուտայ իր համոզումին . . .

Կիրակի առաւօտ կանուխ պատրաստութեան կսկսին . . . Թուլիկ իր պահեստի հագուստներուն վրայ կաւելցնէ դրացի բարեկամուհիներու ըղզակները, բան մը զոր սովոր են ընել աղջիկտեսի նմանօրինակ պարագաներու մէջ, և ճիշդ ժամը մէկին այր և կին, իրենց աղջկանը հետ, ինչպէս նաեւ թէյդէ տուտուն, դրացի էլմօնիկը երկու զաւակներով, ուրիշ կին մ'ալ երեք թուսներով, ընդ ամէնը 10 էն աւելի բազմութիւն մը դէպի կամուրջ կ'ուղղուին . . .

— Ինծի նայէ Ագապի, մէյ մը ետիդ նայէ, էսկիշէհիբին ըօսթան ալ անցաւ, ա-

սանկ օլուխ չօճուխ ի՞նչ տէյի հետդ կը քաշես կոր . . .

— Սո՛ւս . . . քեզի չըսի՞ քի մի խառնուիր տէյի, ասանկ ուրախութեան բաները խալապալըսով կըլլայ . . .

— Աղէկ ես, էլմօնիկին աղջիկը ի՞նչ տէյի հետ կ'առնես կոր, ան մերինէն տահա կէօսթէրիշի է, տղան խաղայով ան հաւնի նէ . . .

— Անիկայ չպիտի ցուցնենք, վարը խառնաւ պիտի խօթենք անոնք ճանըմ, վըռ վըռ վըռ մի խօրաթեր անկճիս տակը . . .

— Բէք աղէկ, ես չէի ըսողը, կըսէ ու խեղճ մարդը քրտինքները ճակտին, անմեղ դառնուկի պէս կը հետեւի կանացի բլանին . . .

Կամուրջէն շին մեկնող 39 թիւ շոգենաւը սուլած էր արդէն երբ մեր աղջկան քօմիսիօնճիները հեւ ի հե հասան կամուրջ . . .

— Քա պանա պագ պիլէթճի աղասի իսկէլէն չէքմէ . . . նա կուգանք կոր . . . հայտէ Միրիճան աղա, կլոս համրէ տէ պիլէթիները առ . . .

— Հայտէ դուք անցէք տէ ես ալ կուգամ կոր, ըսելով տոմսակալաճառին կը մօտենայ, մինչ Ագապի տիկին շոգենաւին մէջ տատամոտ . . .

— Քա կեցէք նայինք Թուրֆանտա տուտուն հոս պիտի ըլլար, ո՞ր թառափը նըստեր են անապա, ըսելով հովէն բիւրիւղ մագերը երեսին երկու կողմէն, բէշը վեր սոթթած կսկսի լինառտուքի . . .

— Ինծի նայեցէք կըսէ Միրիճան աղա, ափով տոմսակները երկու ձեռքին մէջ, վեր ելէք վեր քի հալա առնենք . . .

— Քա ճանըմ կեցիր նայինք, խնամիսներնուս թառափը սօր են նստեր . . . վայլում է քի մինք ալ հոն նստինք . . .

Ու երբ սանդուխին վարէն միջնորդ ջտտուկին խալիժ դէմքը կը նշմարէ . . .

— Նա՛ նա՛ վերն են եղեր, քայեցէք քա աղջիկներ, ինծի նայէ Թուլիկճան, դուն սանկ պիշիմով մը, կուսաօլուճա փէշը պռնած ետեւէն եկուր, և ուր նստիմ նէ քովս եղիր, ամա ինծի նայէ (ականջն ի վար) նայէ քի բերանդ տայիմա պիւզմէյէս, չէլլաս ինքիզինքդ տուտին թախթաբօշը կիտնաս տէ քահքահները թող տաս . . . կայնէ նայիմ, սա թառափի մագերդ վեր

առ, կէօքորիւթ չէնկէլ կոճակն ալ ուսուցող մը քակէ քի տակէն բէմպէ կուտելալը շապիքիդ անտաւթօները երեւան, անոնց կէօքթրիչն ալ պաշխա է . . .

— Ի՞նչ կըսես առաւու քրտնած եմ, հովէն կեղւամ կը հիւրնդնամ . . .

— Դուն ի՞նչ կըսեմ կոր նէ ան ըրէ, պաղ առնես նէ կռնակիդ ազով իրիօն մը քսելուս պէս մէկ քրտինքիդ տիպ տիրի կըլլաս . . .

— Քա ամօթ է տուտուս, ի՞նչ տէրի կէօքսըս պանամ . . .

— Բ՛նչ . . . ասկէ տահա պաղ պախա. լին խասապին կերեւաւ կոր տէ ամէն իմիր, հիմա Աղտուծոյ հրամանովը էրիկցուէ՞դ կը խղնիս կոր . . . հա՞ . . .

Ու բոլորը մէկ կեղւան վեր, ու կանցնին կը նստին հոն, ուր դիտարկաւոր, ակնացաւոր, չիք միւսիւ մը, ճերմակ ուէյէ բանթալօնին վարի մասը վեր դարցուցած, շամբաներ պոթերը տնկած, սլիօ ֆօնսէ օաքէթը կռնակը բազմած էր նստարանին անկիւնը, մինչ դէմը ջատուկ խաւովուղը մէկուկէս կանգուն բերանը լարած հովին՝ հաղորէ աչք կընէր Աղապի տիկինին, որպէս զի իրենց դէմը դայ նստի . . .

Հիմա տեսարանը քրքշալիր է ալ :

Աղապի տիկին, երկու մաս կեռտանը կախած, «հասուկ աղջկանը մարը ես եմ, իմ խօսքովս աս գործը կըլլայ կը կատարի» ի ձեւով մը կանցնի կը նստի իր կնիթադրական փեսացուն դիմացը, Ծուլիկն ալ ինքզինքը հաւնեցնելու մարմաչէն դեղնած, խաշած ըսթախողի պէս, ճակտին մազերը քրտինքէն, քսուած բուտալին փակած, մայրիկին քովը կը տոտուողուի, թէյզէ տուտուն, տղուն քովը : Իսկ Էլմոնիկ տիկինը իր աղւոր աղջկանը հետ վարի գամառան կը մընան, ըստ նախապէս կատարուած խօսք մէկին, ու Միրիճան աղա տեմէքով ամսակները ձեռքը հեռուն անկիւն մը կը քաշուի իր աճուգի տիկինին ձգելով էն ծանր ուօյը (°) :

Պահ մը բոլոր ներկաները իրարու աչքի մէջ կը նային, ջատուկը կսկսի դերեղմանի պէս փոս աչքերը խախցնել, մերթ ողուն կողմը, և մերթ Աղապիին դարձնելով :

Վերջապէս, նոյն այդ միջնորդունին լուծութիւնը խղելով,

— Ո՛ւր առանկ տիկին Աղապի, կիտնալս դուք ալ ճուրիքը կեղւաք կոր ասոր . . .

— Սուս եղիր քուրուկ, ճահիլս էտեւէս ինկաւ քի, իլլէ Պօլաղլիի սուաչօ մը ընենք տէրի նէ, չը դիմացայ ևսլլած ըրի դուրս ինկայ . . .

Աղապայ փեսացուն, իր աղապայ զօքանչին ճալաճուլա խօսուածքը իմանալուն, քիթէն ակնոցը խնալու չափ դէմքը թթուեցնելով՝ դրպանէն դադիներէն լրագիր մը կը հանէ ու կսկսի կարդալ, մինչ քսի պաւազան մէկուն ուշադրութիւնը չի դրաւոր, ու խօսակցութիւնը կը շարունակուի :

— Միրիճան աղան ո՛ւր է, ինչու հոս մեր քովը չիգար կոր . . . հաղէն կը քաշէ կոր վախնամ . . . կաւելցնէ ջատուկ խաւովուղը, աչքը Ծուլիկին վրան վազցնելով, տեսնելու համար թէ թուայթը տեղն էր . . .

— Բիչ մը քրտնած է տէ կը հովահրի կոր, հիմաճուկ ուր է նէ կուգայ . . .

— Ջեղի պաղանթէն ընեմ միւսին, կըսէ խաւովուղը, ու սոխ ըստրիկէն խանձած մասնիքը երիտասարդին կողմը տանելով, միւսիւ Բիչու . . . Պետրոս է ամա Բիչու կըսենք . . . կայնէ նայիմ ի՞նչեան . . . (երիտասարդը առանց ոտքը ոտքէն վար առնելու, սուր փայտով մը ասդին կը դառնայ . . . հա՛ Մէրանէյէնեան), ալուօքայէն մէկ քանի տարի ուսաջ եկած թիւճարի, ի՞նչ . . . կայնէ նայիմ . . . հա՛ սըմսար . . .

— Քա տուտու սամսար է կըսէ կոր . . . խօսք կաննէ աղջիկը դէմքը մօրը սալաթա գլխարկին տակ պահուցնելով,

— Սուս հիմա միտերդ կոլորեմ հա՛, այո՛, շատ մէմնուն մնացի տեսութիւն ընկուս . . . ինչպէս էք միւսիւ, հանգիստ էք, ըռահաթ էք . . .

— Կղան մէղսի մատամ . . .

— Հրամանքիդ ալ կարծեմ ջուկերը կեղւաք կոր ասոր . . .

— Այո՛ . . . մատամ, բաղ անիւրի . . . կուղեմ մեղցնել օղըս . . .

Տիկին Աղապի, սուր խնդալով մը խաւովուղին ականջն ի վար . . .

— Քա դուն իմին տիւշմանս ես . . .

հէրիֆօզիոզուն ըստըութալը խորթախ լէ-
րէմի է, ինտոր պէրանդ վրայ կնաց տէ
կիւլի պէս աղջկանս բէշ քաշեցիր . . .

— Հի . . . քար պերնիս, քա տղան
նոր մօտայ լիզաներէն կը խօրաթէ կոր . . .
էյ վալլահ, հէմէն պիր կէօրիւշ պիր պարըշ,
եաֆտան փակցուցիր . . .

— Հէմ ինծի նայէ, սիրուն ալ տաք չէ
աղջկանս վրայ, սանկ մէյ մը պիլէ քէտի
կէօղիւտով մը չի տաւցաւ չի նայեցաւ . . .

— Ինչ կուզէիր, մէկ տեսնալուն կիրկը
առնէր տանտանա պէպէք հօբլա՞ պիտի ը-
նէր . . .

— Չէ ամա պէտքը չէ՞ քի աչքին պոչը
վրան ըլլայ տայիմա . . .

— Կեցիր նայինք տահա կը տաքնան,
հէլէ հինդ տաղիդէ անցնի . . .

Միւսիւ Բիէն կրկին ինկած էր իր ըն-
թերցանութեան, երբ երկու ամուսնութեան
վարպետները կը խօսակցէին . . .

— Կեցիր ես հիմա կը հասկնամ գործը,
ըսաւ Ագապի, ու Ֆուլիկին դառնալով,
ինծի նայէ Ֆուլիկճան, հայտէ ելիր հայրի-
կիդ քովը գնայ նստէ քիչ մը, տիօր օր աչկ
չընեմ նէ հոռ մի գար . . .

— Ուֆ մայրիկ . . . հոռ աղէկ էի . . .

— Ինչ կըսեմ կոր նէ ան ըրէ, թէքէյիդ
կիչնամ հա՛ . . . սովուճով մասրաֆ կղա-
խապա՞ր ես, վրա՞յ տալ պիտի տաս . . .

Ու հազիւ Ֆուլիկ տեղէն ելլալով հորը
մօտ պիտի երթար, ոտքի ելած թէ չէ,
բէշին ֆէւս—ժիւքէրը մոռցած ըլլալով կոճ-
կել, ֆաթուռս պատմայէ խալչալըսին ծարը
ի հանդէս կուգայ, ճիշդ այն պահուն երբ
միւսիւ Բիէն ընթերցումը ձգած աղջկանը
կը նայէր ակնոցին տակէն . . .

— Ոտքդ պազնեմ, տուր կտին կոցել
տուր, վրաս մարելիք կիյնայ կոր, կըսէ
խալվուզը . . .

— Ֆուլիկ . . . Ֆուլիկ . . . հոռ եկուր
մէյ մը . . . (ականջն ի վար . . .) չան
զաւակ տիպդ կոթկէ . . . հիմա կը դրոշմիմ
հա՛ . . .

Այսպէս երբ խեղճ աղջիկը ըսթախող
դառցած կունակը կը շտկէր, միւսիւ Բիէն
գլխարկ ի ձեռին,

— Բաղտոն մատամ, չատ հող է՛ վաղ
իջնալու ստիպուած եմ, նեղեցէք, ըսելով

վար կինջնայ, քովետի խցիկները, բւր փի-
կին էլմոնիկ և աղջիկը նուարդ նստած էին
առանձին . . .

Եօթը խօսքով պարապը ելլով Ագապի և
խալվուզ կինը, դէմ դէմի զոյդ հաւերու
պէս իրարու երես կը նային, առանց հա-
մարձակելու բառ մը արտասանել մէկմէկու . . .

— Հաւնեցա՞ք եղածին . . . հէ՞ . . . քա
առանկ աղջիկանս կը հանեն մարդը . . .

— Քա՛ հոռ եկուր, կէտինին օձերուն
կեր ըլլալիք բիճ, կըսէ Ագապի աղջկանը
թեւերը կամթթելով, քա ինչո՞ւ առանկ
խալք ըրիր մեղի, քա՛ ինչո՞ւ հագուած
վախիթդ տիխաթ չես ընէր կոր . . . հէ՞ . . .

— Ինչ գիտնամ մայրիկ, կոճակները
թուլցեր են տէ . . .

— Թուլնաս տէ լէշ կտրիս . . . բօստալ
չուն, հիմա հաւնեցա՞ր սա եղածին, տղան
կէօզկէօրէ հասկցուց քի չի հաւնեցաւ տէյի . . .

Նոյն ատեն Միրիճան աղա իրենց մօտե-
նալով,

— Նասը հաւնեցա՞ւ . . . նայիմ տուած
խօսք կապը, աֆէրիմ Ագապի, զէնահաթին
մահլըն ես եղեր . . .

— Սո՛ւս, հիմա քեզի հետ ալ կը կըզ-
ուրտիմ հա՛ . . . սատկելիք բիճիդ ըսէ,
տաք չօրպային մէջը պաղ ճուր լիցուց . . .

— Էյ աղէկ եա՛, պարէ չեղաւ նէ ետ
դառնանք, մօտ իռկէլէն օրն է նէ հոռ ել-
լանք . . .

— Քա ճանրմ, կըսէ խալվուզը, տղան
չէնք շնորք հաւներ կատարէր պիտի գործը,
նայիս օր սէն սին, աղջկանը կռթմածէն
խալչալըսին ծարը տեսածին կիպի վար սը-
վըշմիշ եղաւ . . .

— Քա ամա կեցիր մէյ մը հասկնանք,
պէլքի մեկուն էր քի կնաց . . . կըսէ մայ-
րը, յուսոյ վերջին բառեր մը դուրս տալով
մրկած արանէ . . .

— Ատ ալ կայ ետ, կեցէք մէյ մը եր-
թամ հասկնամ ըսելով ջատուկ խալվուզը
վար կինջնայ ու կսկսի հոռ հոռ փնտռել . . .

Գալով միւսիւ Բիէնին, տղան չի կրնա-
լով տանիլ այդ ճալաճուլա կնիկներու խօ-
սակցութիւնը, մանաւանդ ի տես Ֆուլիկին
խալչալըսին, վարի խցիկը կը մանէ, ուր
տիկին էլմոնիկ իր աղջկանը հետ նստած էին

նշալուզ կնիկը ներս մտնալով, կանցնի միւսիւին քովը կը նստի :

— Նասը՛ւ էր աղջիկը ետալում, սիրտդ սիրեց . . .

— Ամուսնութենէս վեղջը մտադիզ եմ տամ տեճեղ մը բղնելու, բայց կաղծեմ թէ օղիողղը այդ գողծն ալ չի կղնար ուղածիս պէս կառաղել . . .

— Ձի հասկցայ ետալում տա՛ւ տեճե՛ք ինչ ըսել է քի . . .

— Առած արկնոջս սենեկին յատուկ սպասունի, ողպէս զի հագուեցնէ հանուեցնէ, վեղջապէս անող հետ զբաղի . . .

— Էյ չէ ատտարն ալ աֆ ես ըրեր, լիւծիս պէս աղջիկ է, ամա ինչ է եղեր ետալը յոթենով կունակի կոճակները մոռցեր է դնելու . . .

— Կոճակները կղնայ ըլլալ ող շտկուին, բայց իղենց խօսուածքը, նիստ ու կացը կաղելի չէ շտկուիլ, ուստի կաղաչեմ ող այս գողծը չեղեալ համաղէք . . .

— Էյ ետալում հէրիֆները օսկի մը խնտար մասրաֆ ըրին քեզի համար, նոր ֆիստան շինելնին ալ ճաղա . . .

— Խնդղեմ զիս ձգեցէք, ողպէս զի լեղադիզս կաղդամ . . .

— Ինծի նայէ, կուզե՞ս նէ սա դիմացի նստող աղջիկը պէճէրեմ . . .

— Շնողհակալ եմ տիկին, պէտք չունիմ . . ., ըսելով կսկսի իր լրագիրը կարդալ անտարբեր, մինչ խալուղ ճատըն ուրմքած փետտուած վեր կելլայ արկին Ագաս պին քովը :

— Իշտէ նայէ կըսէ կոր քի խըյախ հաւնեցայ, գիտես քի սիրտս ճղքեցին մէջը չէրչիւլէլէմիշ ըրին ամա, իշտէ ատ ետալմաճին մէսէլէէն պաղեր է . . .

— Ինծի նայէ, պաղեր է նէ թող կըռնըկին հաւտալ պտուտցունէ, ա՛շ . . . հէ՛մ տէ նաղիք հէրիֆի հետ գործ չունիմ, մալըս անանկ մալ մընէ քի, աղէկ կինիի պէս քանի վրայէն տարի ասնի նէ մախպուլ կըլլայ . . . խահապէթ, զիւպպէ հէրիֆ ըսէ, ինչ կուզէր, հիմաճուկուան չէքիրկէներէն չէ աղջիկս . . .

Միրիճան աղա, որ խեղճուկ մը դէմերնին նստած, անցած խօսակցութիւնը մտիկ կընէր, խօսք առաւ,

— Ան չէ ամա մեր մասրաֆները ո՛վ պիտի տայ . . . կընիկ, դուն չապուխ մը խարարը տուիր լիճնցաւ, հիմա աստար սիււրիւն ես ինտո՛ր պիտի պարտըկեմ . . . հէ՛ . . . ինչ ըսէլէթ է ասիկայ . . .

— Ինծի նայէ Միրիճան աղա, դուն խանութպան ես, էկէր ամէն միւշտէրիի աւջի թափած մալերդ ծախելու ըլլաս նէ միւշտէ կըլլաս. աղջիկ զաւակ ունեցողը ասանկ մասրաֆներէն չի պիտի փախչի, կըսէ խալուղը . . .

— Անանկ է նէ գալ կիրակի ալ Առային վաքօը տիւրը պաղ հէրիֆ մը պիտի, ասանկ ամէն շաբթու գործ հանէ կլոխին . . .

— Չար սահաթ է եղեր քի, ես խալուղութան, դուն ալ աղջիկ զաւակ տէր ենք եղեր . . .

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱՋԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն ինն անգամներէ բաղկայած խնամակալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրենց դիմող հայ աղջիկներուն : Կ'ուսանողւին բնական, խնաստասիրական, չափակ սն եւ այլ գիտութիւններ : Մասնաւոր ոյժ կ'սրուի հայերէն եւ անգլ. լեզուներուն . կ'ուսուցուին նաեւ քուրճեքն եւ Ֆրանսերէն լեզուները : Վարժարանին երկու ընդարձակ եւ օգտեւէ շէնքեր, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամներ մեծապէս կ'ապահովեն առակերտներուն առողջութիւնը : Անասոյուի Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ հաճելի կ'ընծայէ : Գիւերօրիկներու տարեքուսին է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւորով պէտք է հասուցանել : Դասակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'ապահանջուի, դասառութեան քիւսն համեմատ : Երգեհոնի դասի համար 2 1/2 ոսկի կ'ապահանջուի : Վարժարանին ԽԱ. տարեօրջանը կ'սկսի Սեպտ. 13 (Ն.Տ.), Դե. իրիկունը : Վարժարանին նոր յայտագիրն ուղղղներուն ձրի կ'ըրկուի :

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիրքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոգ. Ս. Էմ. Գալպանեանի, Ասեմապեոս խնամակալութեան, Ասաբազար : 8-2

ՏԻԿԻՆԸ

(ԻՐ ՆՆՁԱՍԵՆՆԱԿԻՆ ՄԷՁ)

Մահճակալ մը՝ չորս կողմը ժանեակներով պարուրուած, թաւիչէ բարձեր՝ որոնց վրայ կնոջ պղտիկ գլուխ մ'է դրուած, ձիւնասպիտակ սաւան մը՝ ամբողջ մահճակալը գոցած է որ չի կրել իր վրայ պղտիկ բիծ մը՝ յայտնելով իր կնոջական ազտութիւնը։ Ահա՛ ասոր մէջ է պառկած հայ-լայն Դասակարգէն կին մը, զոր տեսնել կ'արժէ առաւօտուն, երբ ան արթննայ գիշերուան խոր քունէն։

Արեւը երբ իր առաւօտեան կարմիր և երկնաւոր դաճանքները վարագոյրին ձեղքերէն ներս ցանցնէ, ան՝ իր negligé վիճակին մէջ, իր կուրծքը ամբողջովին տանթէլներով զարդարուած, մէջ մը աջ և մէջ մը ձախ կը դառնայ ու կսպասէ սպասուհիին, որ դայ և իմաց ապ իրեն թէյին պատրաստ ըլլալը . . . :

Վրայէն հագած է գիշերանոց մը՝ որ ամբողջովին ժանեակներով հիւսուած է, որուն մէջէն կը տեսնուի իր կարապի ճերմակուած թեամբ վիզը և հոլանի թիւերը, որ մերթ կը շարժին իր երեւոյն վրայ, Գանգուր մօզերը աչքերուն առջևէն միշտ ականջներուն ետին խոթելով, որոնք անհանգստութիւն կը պատճառեն իրեն, երբ աչքերուն առջևէն կամ քովէն դէպ ի վար ուռեցած կուրծքին վրայ եկած կախուած են։

Յիր ու ցան մազեր, բարձին վրայ ցանցնուած հոս ու հոն, ծովի մը պատրանքը կուտան, և իրօք ալ մազէ ծով մը դարձած է իր զխու բարձը, ամբողջ վարսերու վերտերով ծածկուած։

Այլ կողմը դարձած, պահ մը կը դիտէ պատէն կախուած լուսանկար մը, ու աչքերը անորինն մէջ սեւեւած, կը նայի առանց իսկ թարթելու, և այսպէս դիտելէ վերջ, վերջապէս այտերը երերցնելով կակսի քիթիմաղ մը դուրս տալ իր շրթներէն և դէպ ի ձախ կը դառնայ։

Հիմա ալ կը նայի դէմը դրուած խոշոր հայելին, որ իր դէմքը ամբողջովին մէջնէր առած։ Հարսի հազար նազանքներով

կը ժպտի, երբ կը տեսնէ անձը, ուռեցած աչքերը և ցիր ու ցան մազերը, որ խոսկան դաշտ մ'էր դարձեր։

Ու սրտնեղած, հնչեցուց դանգակը, որ սպասուհին վեր դայ, մինչդեռ սպասուհին վարը իր տիկնոջ գործերովը զբաղած, չլսեր անոր ձայնը ու աճապարանքով կը շարունակէ նախաճաշը չիւն չլսելու համար իր տիկնոջմէն։ Տիկինը այս յայտադրումէն դայրացած կակսի կանչել։ Աս ձայնները լսելի կըլլան ու խեղճը ձեռքի գործը ձգելով կըսկըտի վեր վազել տեղի չտալու համար անվերջ չեխերու։ Դուռը բանալով ու սիրտն ալ բաքախուէն, ներս կը մտնէ ու կերթայ կը կայնի մահճակալին քով, հրամանի սպասելով։

Տիկինը այս պարագային երեսը անոր դարձուցած ու քիչ մ'ալ ծռումը կելով կը հարցնէ։

— Սեղանը պատրաստ է . . .

Խեղճ ծառան վախէն գողգողալով կը պատասխանէ։

— Պատրաստուելու վրայ է, տիկին . . .

Տիկինը այս խօսքերէն զայրացած, ձայնին խիստ չեշտ մը կուտայ . . .

— Ինչո՞ւ չպատրաստեցիր մինչև հիմայ . . .

Խեղճը չի կրնար պատասխան մը տալ, և երեսը կախած աչքին ծայրերովը վրան կը նայի։

— Գնա՛յ, չո՛ւտ պատրաստէ, կըսէ այս անգամ տիկինը։ Սպասուհին խեղցն դուրս կը խոյանայ սենեակէն ու կակսի պատրաստութեան, վերջէն անգամ մ'ալ չի լսելու համար այդ խօսքերը . . .

Ահա՛, տիկինը իր ննջասենեակին մէջ այսպէս է, հաւատացէ՛ք ասոր . . . :

ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի և Պեդրիկի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուգին քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամատեցի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաև Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է դիմեն Պահգե-գափու Բալուգաի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրաբանութիւնները դասախօսութեան առթիւ։

ԱՌ ՕՂԻՆ

Երբոր ըսեն թէ ինչո՞ւ այր եւ կին միշտ սրդողին՝
 Հաստաց գիտցէ՛ք պատճառն է գործածական սերք օղին :
 Չուարհութեանց մէջ երբ շատ խրմենք կըլլանք ալ զինով ,
 Չուարհութիւնն ձեռք բերած կըլլանք կեանքի մեր զինով :
 Ճնկելու ասեն երբ մէկը զմէկու կը մաղթենք անուշ
 Աւելի լաւ է որ միմեանց ըսուէր խրմէ՛ք անուշ :
 Այն որ առտուանց կարքընայ փունէն ապուշի նըման
 Գիտցէ՛ք որ այդ անձ ապահովապէս է մոլի խրման :
 Ընտանիքի մը կործանման պատճառ է անշուշտ ալօր
 Ինչպէս որ կանխաւ զայս փարզած է առաքեալըն Բօլ :
 Օղիի համար տարին կը ծախսեն մէկ երկու հազար
 Որ տարին հեղ մը իրատ մը առնէ գինեպան Լազար :
 Շատ հեղ ընտանիք զաւակ ու պատիւ զոն կընէ ոգին
 Երբ բնոյթ կըլլայ մարդս չուզէր թողուլ մինչ չելայ հոգին :
 Երբ առողջ անձ մը վստահ իւր կազմին շատ փրչէ շիտակ
 Սակայն միշտ շիտակ իւր աւերներէն թողու յիշատակ :
 Օղիի համար երբ գինեպանին դու շատ աղաչես
 Բայց հացագործին երեսը նայիլ յետոյ կամաչես :
 Ի՞նչ իրաւունքով վասակիդ մեծ մասն ձգես գինետուն
 Որու տէրն արդէն քու զաւակներդ են այլ ոչ երբէք դուն :
 Եւ այն պատճառն որ շուտ կըսկսի խրմելու օղին
 Թող գիտնայ թէ շուտ նա պիտի յանձնէ իւր կեանքը հողին :
 Մարդուս իրաւունքն կեանքին եւ պատուոյն քրեանմի օղին
 Երբէք չի գըթար ու միշտ կսպառնայ զինքը խրմողին :
 Ով որ կը խմէ ամէն իրիկուն չափազանց օղին
 Յանախ փողոցի տիղմերը կըլլան իրեն անկողին :

ԵՐՄՈԳ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(Թ. Գ.) Եւ որ անտարբեր շատ մը տարիներ խրմէի օղի
 Բայց երբ զգացի ցաւ ստանալիս արտի ու կողի
 Այն անկողնայէս կանգնով մը հաստաց զայն մեկդի թողի
 Ու այն ասկէ վերջ յունիսն պատճառ մը վախուռ ու դողի :

ՆՈՅՆ

[5]

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՒԺԱՔՕԼԻՕ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՓԻՂԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐՔԵՐԸ

Փիղերու կարաւան մը առաջացած առան հարիւր, երկու հարիւր մըն ճամբայ կ'առնէ մէկ օրուան մէջ և կ'իջեւանին ամէն իրիկուն նոյն գիւղին մէջ զոր կը գործածեն քալած և կուռած առնենին :

Բայց այս նախապատրաստութիւնները չեն բաւեր իրենց : Իբր առաջացած իրենցմէ կորոչեն մաս մը, որոնք առաջացուալ տրահեաներու մէջ կ'սպանեն :

Դիւաւորները որոնք կառաջնորդեն խումբը դէպ ի անծանօթ վայր մը, ուր փիղերու այդ ցեղը պիտի հաստատուի, միշտ գիշերային իջեւանները կընտրեն հաշուազուտ մտայնութեամբ մը. անկէ քանի մը քայլ անդին կը դառնան միշտ անուշ ջուրի դետակ մը և կակուղ հանդստաւէտ դալարիք :

Տարւոյն որոշ մէկ չրջանին էգ փիղերը կը թողուն խումբը և կ'երթան անառնեւորուն խորը թափառիլ երիտասարդ արուններու հետ, զորս իրենց կռուէն կը քալեն : Բայց զործը միայն պիտուէիներուն հետեւելով կամ անոնց կողմէ հաւուհելով չի վերջանար : Այս աստղատակոն փիղերը պէտք է մրցակցութեան մէջէն յաղթական ելլեն և տիկին փիղին հաճոյականութեան արժանացողները պէտք է խիստ կռիւներ մղեն իրենց յաղթութեան . . . պտուղը վայելելու համար : Այս շրջանին գիւղը դատարկ է, ծերունիները միայն մնացած են իրենց անցեալ ժամանակներու քաղձր յիշատակներուն միմիջարկութեան հետ :

Երբ ամէն ինչ խաղաղած է, մրցակցութիւնը դադարած է, զոյգերը կը կազմուին և տարօրինակ բան, — զոր բնաւ չպիտի համարձակէի յայտնել երբ շատ մը տեղացիներէ լսած ըլլալէս դատ աչքովս ալ տեսած չըլլայի, — իւրաքանչիւր զոյգ երբ անգամ մը համաձայնի, կը մեկուսանայ սիրոյ ամ-

բողջ եղանակին : Ամիս մը, վեց շաբաթ երկուք երկուք կ'երթան իրենց խայտանքը վայելել անտառին ամենախոր ծերպերուն մէջ և յետոյ կը դառնան իրենց հանրային կեանքին, առանց սակայն իրար մոռնալու :

Ամէն տարի արու փիղերու մէջ կուր կը մզուի միմիայն արբունքի հասած էգերու ստացման համար : Հիները կը մնան միացած՝ զոյգ զոյգ և մահը միայն կը բաժնէ զանոնք այս միացումէն : Փիղերը խիստ ամօթխած կենդանիներ են : Չեն ուզեր իրենց սիրոյ գաղտնիքները արտահայտել աչքերու առջև պարզել, և այս պատճառաւ է որ եւրոպայի մէջ իրեն յատկացուած անյարմար և անուր ատեններուն մէջ զաւակ չեն ունենար :

Երբ Եգիպտոսներու ցեղապետին բնակավայրը Օպա-Օգուէ հասանք, զարմանքով տեսնեմք որ անոր աղարանքը չըլլալատուած է փիղերու խումբով մը իբր պահակ, ինչ որ ցոյց կուտայ թէ Ափրիկէի փիղերը կրթութեան և մարզուելու կատարելագոյն են :

ԿՈՐԻԼԻՆՔ ՍԱՐՍԱՓԸ

Եգիպտոսներու այս անծանօթ երկրին մէջ, և իր անծայրածիր անտառներուն խորը միայն փիղերը չեն որ կը բնակին : Կորիլ և Շիմանդէ կապիկներն ալ լեցուն են այս մթնասուեր վայրերը :

Գիտէինք որ այն կողմերը մարդ կը հանգիպի Կորիլին կամ Ափրիկեան կապիկին, հետեւաբար շատ ահ ու սարսափ չգեացինք երբ առաջին անգամ ըլլալով ճակատ ճակատի դառնեցայ այդ սոսկալի կենդանիին հետ Եգիպտոս անտառներուն մէջ :

Մեզ ընկերացող բնիկները և առաջնորդնիս Ֆէքուէ բաւական խօսած էին մեծ կապիկի մը վրայ, որ մարդու պէս ոտքի վրայ կը քալէր և որ ոչ առիւծէն, ոչ վագ-

րէն և ոչ իսկ փիղէն կը վախնար : Բայց ես այս ամէն կարծիքները ընդիմ չափազանցութիւններ կը նկատէի :

Մեր մեկնումին վեցերորդ օրը , երբ արեւծագէն քանի մը վայրկեան ետք մեր իջեւանը կը ժողվէինք , կարաւանին ծայրէն ճիչեր լսեցի և տեսայ սարսափի մատնուած ես ընկրկումը ձիմսի և Շարլիի որոնք հա-կառակ հրամաններուս այդ առաւել իրենք անցած էին կարաւանին գլուխը , մինչ ես կուզէի որ միշտ տեղացի պատերազմիկներ դառնուէին : Առանց դանոնք հարցաքննելով ժամանակ կորսնցնելու , Լուսիուսի և Ուրանոյի հետ առաջ նետուեցանք և մեր Պէ-նէնցի զինուորներէն 20 մէթրի չափ հեռու նշարեցինք հրէշային Կորիւ մը որ ձիդ կայ-նած , կատաղութեամբ կուրծքին զարնելով , կ'սպառնար ճակատիլ մեր անցքին դէմ :

Վարանման տեղի չկար : Մուացման վայրկեան մը և ահա մահ էր արդիւնքը , քանի որ Կորիւ կապիկին առաջին յարձա-կումը անդուստ և անդիմադրելի է :

Բաթրիքի հրամանին վրայ , Պէնենցի զինուորները որոնք պատրաստ էին արդէն , պարպեցին իրենց քարապինաները և Կորիւ ինկաւ տասնէ աւելի գնդակներով ծակծրկու-ած : Մահը շանթանման եղած էր , քանի որ շատ մը փամփուշտներ սիրտին և գլու-խին բանած էին :

Մտեցայ գազանին : Կորիւ մըն էր , չէի խաբուեր : Արդէն Բոնկոյի , Մազամոյի և ուրիշ տեղերու մէջ հանդիպած էի այս սոս-կալի գազանին : Եւ այս սպաննուածը իմ ցարդ տեսածներուս մէջ ամենէն խոշորը և հուժկուն էր :

Չափեցի : Հասակը երկու մէթրի մօտ էր , իր ուսերը կրկին լայն էին սովորականէ մը : Գալով բազուկին , աւելի մեծ և աւելի դնդերոտ էր քան զօրաւոր մարդու մը ազդրը :

Այս կենդանին լաւ ճանչցուած չէ դեռ : Բայց սա որոշ է թէ ձեռով և բնախօսական կազմութեամբ ամենէն աւելի մարդուն կը մօտենայ :

Պարագան չահեկան է : Այս կենդանին զոր ունի իբր մարդուն նախահայրը ճանչ-ցընել կուզեն , այնքան այլազան տիպար-ներ ունի , որ հաճոյքով պիտի լսուին իր մասին տեղեկութիւններ :

Կորիւ մարդակերպ է , այսինքն կա-պիկներուն մէջ , նոյն իսկ Շիմբանդէն աւելի , իր ձեռովը և կազմութիւնովը ամենէն մօտն է մարդուն : Հասակը 1 մէթր 70 սանթիմէն 1. 30 է , եղունքները տափակ , դէմքը լերկ , անմաշ , բացի վերի շրթունքէն և կղակէն , ուր ոյելս և մօրուք կանո Գազա-թը և գլխուն հասել կողմէն մազը կ'երկա-րի խիտ խիտ : Ուղեղը կը կշռէ 500-570 կրամ : Կուրծքը և ուսերը մարդուն կուրծ-քին և ուսերուն կրկինին մօտ լայնք ունին : Պոչ չունի և ետեւի մսուտ մասերուն վրայ ունէ կոշտութիւն չկայ , Կոնակի սիւնը այնպէս մը շինուած է որ կրնայ մարդու պէս շիտակ կենալ : Կրնայ ուրիշ կապիկ-ներու պէս իր ձեռքերովը ալ քալել և մա-զըլցիլ , թեթեւապէս ցատքել ծառերէն : Մարդուն պէս 32 ազաւայ ունի , և իր չնա-տամները երկար են : Բուսակեր է , և խիստ տարօրինակ պարագայ , իր էզը ամառան կրկնութիւն մը ունի և մէկ զաւակ միայն կը բերէ , որ 9-10 ամսուան գլխեցումէ մը ետք միայն կրնայ իր ուղեւորուն վրայ կայ-նիլ և քալել :

Վերջապէս ան կը չինէ տեսակ մը բնա-կարան պամպուկի ցողուններէ և ծառի ճիւղ-երէ :

Ըսինք թէ կապիկներու մէջ նոյն իսկ Շիմբանդէն աւելի մարդկային ձեւին և կազ-մաւորութեան եղանակին մօտեցող կապիկը այս մարդակապիկն է , Կորիւը : Այս անասու-նին մարդուն ամենէն աւելի նմանութեան ցայտուն մասերէն մէկն է բազուկի ոսկորին երկայնութիւնը , որ աւելի բարձր է քան նախաբազուկին ոսկորը : Այս տեսակ պա-րագայ մը չի նշարուիր ոչ իսկ Շիմբանդէ կապիկին վրայ :

(Շարունակելի)



Առօրեակէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՋԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի ԳԱՏՏԵՍԻ թիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու կունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիւմուղ յաճախողաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հաշուատներու, կանանց թելքոյիներու և տղայոց շիք և գիւմուղի փոքրիկներու հոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է. Գաւառներէն յանձնարարութիւնք միութեամբ կը կատարուին.

46—50

ՇԵՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, չուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներն չեն նետեր, ջուրի և անձրեւի կը գիւմանան, միւլները կը չնշեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ.

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ.

Տեղեղս ամէն կողմի Պատ. յաճախողաց զիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է սոյն գնեցողի իր վերայ առնել ամէն դործ, թէ ներկն և թէ գործաւորոյցի մէջն ըլլալով.

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պաղը-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան: — Գաւառները գործաւորներու պէտք կայ, գիւրամատչելի պայմաններով.

11—20

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՍԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ.

ՅԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանց

ՀԻՐԵՆԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանց

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողեհնալի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանաք Խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ


Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճեհափու, Ճեյալ-Պեյ խան, քի. 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ր Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՑԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Ք Ա Ր

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու, Կրամֆոնի
եւ Երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եալուրդ խանի տակ
քի. 2: Մասնաձևի Պահճե Գաբու
քի. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չուհած համա-
ւը բաղմամբի

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
գրութեամբ և կատարելագործեալ լաւ անասկ կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: